




Ազդարարության Trumpet's Sound փող

56-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ԶՈՎՏԵՄԲԵՐ 2025





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ ԵՐԿԱՄՍՅԱ ՔԵՐՔՐՆ ՍԻՊՆԵՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱՏԱՐԱԿՈՒՔՅՈՒՄՆ Է: Պատասխանատու խմբագիր՝ Իովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տիրոջնով ուրախանալ Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Նախանձախնդիր լինել Զ. Ս. Ռայլ

Ես սրա համար չեմ բաժանորդագրվել Մեթ Սիլվերման

Տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը (2) Դոն Սթորմր

Մեղավոր Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Մտորումներ Հայաստան կատարած իմ այցի Դոկտ.՝ Ջոնաթան Ջեյմս

Տիրոջ մով ուրախանալ

**«Յիրավի, Քո վկայություններն իմ ուրախությունն ու իմ
խորհրդատուներն են»: (Սաղ. 119:24)**

Ուրախությունը պետք է լինի Տեր Հիսուս Քրիստոսին վստահող
յուրաքանչյուր հավատացյալի սրտի վիճակը: Բ Կորնթ. 4:8-9-ում
կարդում ենք, որ հավատացյալներն ամեն կողմից նեղված էին, բայց ոչ
ճնշված, կարոտյալ էին, բայց ոչ հուսահատված, հալածված էին, բայց
ոչ լքված, զարկված էին, բայց ոչ կործանված: Այո՛, մենք կարող ենք
ծանր իրավիճակներով անցնել, բայց սիրտը պետք է հավատարիմ մնա:

Սաղ. 9:18-ում Դավիթ թագավորը գրում է. *«Կարիքավորն ամենևին
չի մոռացվելու»*: Երկու հաստվածներն էլ ընդգծում են, որ Աստված հի-
շում է տառապողներին ու հոգ է տանում նրանց մասին, նույնիսկ երբ
հանգամանքները մռայլ են թվում:

Հայաստանի աղքատ գյուղեր այցելելիս մեր միսիոներական խմբից
ոմանք երբեմն դժվարանում էին աղոթել մարդկանց ապրած սարսա-
փելի պայմաններն ու հիվանդների տառապանքը տեսնելիս: Բայց Տի-
րոջ ձեռքը երբեք չի կարճացել: Մենք շնորհակալ ենք Նրա հավատար-
մության և մեր ընդլայնվող ծառայությանը ձեր աջակցության համար:
Այո՛, մենք տեսել ենք շատ հավատացյալների աղքատության և հիվան-
դության մեջ, բայց տեսել ենք նաև շատերին, ովքեր ուրախ են իրենց
վիճակներում:

Աղոթքով կամ ֆինանսական աջակցության միջոցով կարող եք մաս
կազմել այս ծառայությանը: Մեր խնամքի ներքո բազմաթիվ կարի-
քավոր ընտանիքներ կան, որոնց կարիքները ներառում են նաև
ամենօրյա բժշկական ծախսերը: Հնարավոր է կատարել հագուստի
նվիրատվություն բեռի առաքման ծառայության կամ քրիստոնեական
գրականության տպագրության ծրագրերի համար: Կատարվում է աշ-
խատանք երեխաների և երիտասարդների շրջանում: Դաշտում աշ-
խատող ծառայողները և աջակցության կարիք ունեն: Բացի այդ՝
կան նաև ACM-ի ընթացիկ ծախսերը:

Խնդրում եմ, ACM-ը պահե՛ք ձեր աղոթքներում: Աստված օրհնի ձեզ ձեր աջակցության համար:

Հ.Գ.

Նախանձախնդիր լինել

Մրոնում նախանձախնդիր մարդը առաջին հերթին մեկ բանի մարդ է: Բավական չէ ասել, որ նա լուրջ, սրտանց, անզիջում, մանրակրկիտ, ամբողջ սրտով և հոգով եռանդուն է: Նա տեսնում է մեկ բան, հոգ է տանում մեկ բանի մասին, ապրում է մեկ բանի համար, կյանված է մեկ բանով, և այդ մեկ բանն Աստծուն հաճեցնելն է: Անկախ նրանից նա ապրո՞ւմ է, թե՞ մահանում, առո՞ղջ է, թե՞ հիվանդ, հարո՞ւստ է, թե՞ աղքատ, իմաստո՞ւն է համարվում, թե՞ մեղադրվում է, գովասանքի՞ է արժանանում, թե՞ ամոթանք է ստանում, նախանձախնդիր մարդը բացարձակապես ուշադրություն չի դարձնում: Նա ապրվում է եզակի փափագով՝ Աստծուն հաճելի լինելու և Աստծո փառքը տարածելու ցանկությամբ: Եթե նրա կյանքը վատնվի այդ կրակով, նա գոհ կմնա: Նա գիտի, որ ինչպես մոմը ստեղծված է այրվելու համար, այնպես էլ ինքը, եթե այրվի, կատարած կյանի այն գործը, որի համար Աստված իրեն ստեղծել է: Այդպիսի մարդը միշտ կգտնի տեղ, որտեղ կարող է ցուցաբերել իր ծայրահեղ նվիրումը: Եթե չի կարող քարոզել, ծառայել կամ գումար նվիրել, նա կլացի, կհառաչի ու կաղոթի: Եթե չկարողանա Հեսուի հետ պատերազմում կռվել, ապա բլրի վրա կկատարի Մովսեսի, Ահարոնի և Ուրի աղոթքը (Ելից 17:9-13): Սա այն է, ինչ նկատի ունեմ, երբ խոսում եմ կրոնում նախանձախնդիր լինելու մասին:

Չ. Ս. Ռայլ



Ես սրա համար չեմ բաժանորդագրվել

Երևմ. 45:1-5

Մենք սովորաբար ճանապարհներ ենք ընտրում որոշակի սպասումներով: Մեկը բժշկական համալսարան է ընդունվում՝ բժիշկ դառնալու հույսով, մյուսը՝ իրավաբանական համալսարան՝ իրավաբան կամ գուցե դատավոր դառնալու հույսով: Երբ Աստված մեր ճանապարհները շեղում է մեր սպասումներից, դա հաճախ կարող է շփոթեցնել, հիասթափեցնել կամ նույնիսկ հուսահատեցնել մեզ:

Աստվածաշունչը Բարուքի մասին շատ մանրամասներ չի ներկայացնում: Մեզ երբեք չի ասվում, թե ինչու է նա միացել Երեմիային այս գործում կամ ինչ ակնկալիքներ ուներ, բայց ես կցանկանայի պատկերացնել, որ Բարուքը գիտակցում էր Երեմիայի գործությունը և նրա կոչման կարևորությունը: Անցյալի մեծ մարգարեների՝ Մովսեսի, Մամուելի, Եղիայի կամ Եսայու մասին մտքերը, հավանաբար անցնում էին նրա մտքով: Հնարավոր է՝ ակնկալում էր տեսնել մեծ հրաշքեր և Հուդայի ապաշխարությունը: Գուցե փափագում էր տեսնել, թե ինչպես է Հուդայի ազգը հրաժարվում կուռքերի մեղսալի պաշտամունքից ու վերադառնում միակ ճշմարիտ Աստծո պաշտամունքին: Վերջապես, հոգևոր քայքայման և անմիտ թագավորների ղեկավարության տարիներից հետո Երեմիայի խոսքերն ու գործությունը մարդկանց կվերադարձնեին դեպի ճշմարտությունը: Եվ գուցե, ինչպես Եղիայի գործությունը փոխանցվեց Եղիսեին, Երեմիայի գործությունն էլ մի փոքր փոխանցվեց Բարուքին:

Հետաքրքիր է, թե ինչ էր անցնում նրա մտքով այն օրը, երբ Հովակիմ թագավորը Երուսաղեմի ժողովրդի առջև այրեց իր գրած ու հավատարմորեն կարդացած մագաղաթը, որը գրվել էր այն հույսով, որ մարդկանց ապաշխարության կառաջնորդի: Այդ ամբողջ աշխատանքը, այդ ամբողջ հույսը մի ակնթարթում փլուզվեց: Արդյո՞ք Բարուքն իսկապես սրա համար էր համաձայնվել. ամբողջ կյանքն անցկացնել մարդկանց փրկելու փորձերով ու դրա փոխարեն տեսնել, թե ինչպես են նրանք մահանում սեփական հիմարությունից:

Երեւ. 45-րդ գլուխը նշանավորում է Երեւմիայի գրքի հետաքրքրաշարժ անցումը: Նախորդ բաժինը հիմնականում վերաբերում է Բարելոնի կողմից Հուդայի նվաճման հետ կապված իրադարձություններին, Մեղեկիայի գահակալության ավարտին և դրանից հետո իսրայելացիների առջև ծառայած խնդիրներին: 45-րդ գլխից հետո տեսնում ենք Աստծո կողմից Եգիպտոսի, Մովաբի և նույնիսկ Բարելոնի վերաբերյալ կայացված տարբեր դատաստանները: Բայց նախ Աստված Բարութին պատգամ ուներ:

Մեզ հստակ չի ասվում, թե ինչու էր Բարութը տխրություն և հուսահատություն զգում, բայց գուցե դրա պատճառը գիտակցումն էր, որ չի տեսնելու այն մեծ հրաշքներն ու ապաշխարությունը, որոնց համար հույս էր փայփայում: Քանի որ Հովակիմ թագավորը կտրականապես մերժում էր Աստծո խոսքերը, պարզ էր, որ ազգի ընթացքը չէր փոխվելու: Նրանք գնում էին դեպի դատաստան և կործանում: Ի՞նչ իմաստ ուներ ավելին փորձելը: Հուսահատության այս պահին Աստված ձեռք մեկնեց և պատասխանեց Բարութին: Նրա զգացումները, հիասթափությունը, վիշտը... դրանք անտեսված չէին: Աստված լսեց նրան և ուզեց արձագանքել:

Ես տասնհինգ տարեկան էի, երբ քաղցկեղ ախտորոշվեց ինձ մոտ: Մինչ այդ պահը մեծ սպասումներ ունեի, թե ինչպիսին կլինի կյանքս: Ես դպրոցում գերազանցիկ էի, լավ էի մաթեմատիկայից և ֆիզիկայից, և անհամբեր սպասում էի ավագ դպրոց մտնելուն: Անհամբեր սպասում էի Գոհաբանության տոնին՝ ընտանիքիս հետ լինելու համար: Գոհաբանության օրը լուր ստացանք. 4-րդ ոչ հոջկինյան լիմֆոմա ախտորոշում. տարածվել էր ամբողջ մարմնով մեկ: Ընտրե՞ք մարմնի մի մաս. այնտեղ ուռուցք էր աճում: Մեկ օրում իմ ամբողջ կյանքը գլխիվայր շրջվեց:

Հաջորդ տասներկու ամիսների ընթացքում պետք է անցնեի քիմիաթերապիայի կուրսեր՝ յուրաքանչյուր երեք շաբաթը մեկ, կանոնավոր հետազոտություններով և արյան անալիզներով, թուլացած օրգանիզմով, իմունային համակարգով և այն գիտակցմամբ, որ չեմ կարողանա լինել այն ուժեղ, բարձր գնահատականներ ստացած աշակերտը, ինչպիսին սովոր էի լինել: Ինձանից հսկայական ուժ էր պահանջվում դպրոց հասնելու համար՝ ընդամենը մեկ 45-րոպեանոց դասա-

Ժամի մասնակցելու համար: Ես գայրացած էի, հիսաթափված և հուսահատված, որ կյանքս այնպես չէր ընթանում, ինչպես ակնկալում էի:

37 տարեկան էի, երբ երկրորդ անգամ ախտորոշեցին 4-րդ փուլի քաղցկեղ: Մանկությանս մեկ տարվա քիմիաթերապիայից հետո հաղթահարեցի լիմֆոման, բայց հիմա բախվեցի հազվագյուտ, անբուժելի աղիքային քաղցկեղի: Կրկին կյանքս խափանվեց և չգիտեմ, թե ինչ է սպասվում ինձ ապագայում: Արդեն երկու տարի է, ինչ շարունակում եմ քիմիաթերապիայի կուրսեր անցնել յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ՝ զգալով ուժեղ ցավ և հյուծվածություն: Կան օրեր, երբ պարզապես ուտելն ու խմելը մարտահրավեր է, և այս պահի դրությամբ քաղցկեղը հաղթահարելու որևէ հայտնի միջոց չկա: Գուցե կյանքիս մնացած մասն այդպես էլ շարունակվի:

Այդ պահերին բնական է Աստծուն աղաղակել Բարուքի նույն խոսքերով. «Օ՛, վայ ինձ, որ Տերն իմ ցավի վրա տրտմություն էլ ավելացրեց, հոգնել եմ հեծեժալուց ու հանգստություն չեմ գտնում»: Երեմ. 45:1-5-ում հետաքրքիրն այն է, որ Աստված անդրադառնում է Բարուքի վշտին ու զգացումներին նախքան տարբեր ազգերի վրա գալիք դատաստանի մանրամասներին անդրադառնալը: Աստծո համար ավելի առաջնահերթ էր Իր տառապող զավակի հետ խոսելը, քան ազգերի վրա գալիք դատաստանի մանրամասները հայտնելը: Աստված տեսավ Բարուքի տառապանքը և քաջալերեց նրան:

Աստծո պատասխանի մի մասը կարող է այդքան էլ քաջալերական չթվալ: Աստված ընդունում է, որ ամեն ինչ քանդվելու է և արմատախիլ արվի, բայց նաև հիշեցնում է Բարուքին, որ սրանք այն բաներն են, որոնք Ինքն է կառուցել ու տնկել: Մա կարող է մեզ հիշեցնել Հովնանի հետ Աստծո ունեցած զրույցը, որն արձանագրված է Հովնան 4:11-ում: Աստված Հովնանին հիշեցրեց, որ Նա կարեկցում է Իր ստեղծած բոլոր մարդկանց և չի ուզում նրանց կործանումը տեսնել: Բարուքը կարող է տխրել, բայց Աստված ավելի շատ է տխրում՝ հաշվի առնելով, որ սրանք Նրա կողմից կառուցված ու տնկված բաներ են:

Աստված նաև հետաքրքիր նախագգուշացում ունի Բարուքին. «Իսկ դու քեզ համար մեծամեծ բանե՛ր ես որոնում: Մի՛ որոնիր, որովհետև ասիա չարիք եմ բերելու ամբողջ մարմնի վրա»: Հնարավոր է՝ Բարուքը

կարծում էր, որ Երեմիայի հետ ծառայելը ի վերջո իրեն որոշակի հեղինակություն կամ հիացմունք կպարգևեր, և իր հուսահատության մի մասը կարող էր բխել այն գիտակցումից, որ դա տեղի չի ունենալու: Աստված Բարուքին ասում է, որ նա չի տեսնելու այդ մեծ բաները, բայց նաև խոստում է տալիս. չնայած ամեն ինչ քանդվելու է, Աստված կպաշտպանի Բարուքին և կհասցնի նրան մինչև վերջ: Սա կարող է կարևոր հիշեցում լինել մեզանից յուրաքանչյուրի համար: Քանի որ ապրում ենք կործանման եզրին գտնվող աշխարհում, հաճախ չենք հասնում այն մեծ բաներին, որոնք հույս ունեինք ձեռք բերել: Մեր ծրագրերը խափանվում են հաճախ մեզանից շատ հեռու գտնվող հանգամանքների պատճառով: Եվ երբ Աստծուն ենք աղաղակում՝ ասելով, որ մեր ցավին վիշտ է ավելացվում, Աստված հիշեցնում է, որ մեր կյանքը կպաշտպանվի որպես պատերազմի ավար. ավար, որը Հիսուսը ձեռք բերեց խաչի վրա մահվան նկատմամբ Իր հաղթանակով: Մենք թանկարժեք մրցանակ ենք, որի համար Հիսուսը գոհաբերվել է, և չնայած չունենք աշխարհի առաջարկած բոլոր մեծ գանձերն ու փառքը, ունենք շատ ավելի թանկարժեք մի բան, որը մեզ սպասում է Երկնքում:

Չնայած Բարուքը տխուր էր, նրա աշխատանքը շարունակեց մեծ ազդեցություն ունենալ նրանից շատ ժամանակ անց: Նա հավատարիմ մնաց Աստծո պատվիրանին. մեծ բաներ չփնտրեց իր համար, և այսօր մենք հազվադեպ ենք լսում նրա մասին: Կարծում եմ՝ երբեք չեմ լսել Բարուքի մասին մի քարոզ, և եթե սովորական հավատացյալին հարցնեք նրա մասին, հավանաբար կասի, որ երբեք չի լսել նրա մասին: Այնուամենայնիվ, այսօր Երեմիայի խոսքերը մեզ հայտնի են միայն Բարուքի կատարած աշխատանքի շնորհիվ: Նա երբեք հայտնի չդարձավ, բայց կարևոր դեր խաղաց Աստծո Խոսքի փոխանցման գործում: Նա երբեք չտեսավ իր աշխատանքի ամբողջական պտուղները, բայց բոլորս այսօր օգտվում ենք դրանից:

Այսբան տարի քաղցկեղի դեմ պայքարելուց հետո ես հաճախ եմ աղաղակում Աստծուն Բարուքի նույն խոսքերով: Ինչո՞ւ եմ ստիպված անցնել այսքան տառապանքի միջով: Սակայն այս տառապանքի ընթացքում ինձ համար խրախուսական բաներից մեկն այն է, որ իմ կյանքն ազդեցություն է ունեցել այն մարդկանց վրա, որոնց նույնիսկ

չեմ հանդիպել: Մարդիկ, ովքեր կարդացել կամ լսել են իմ քարոզը կամ պատգամը, գտել են հույս, նույնիսկ երբ ես տառապում եմ ցավից և հյուծվածությունից: Ես հիշեցնում եմ, որ այստեղ չեմ մեծ բաներ փնտրելու իմ կյանքի համար, այլ մրցանակ եմ, որը նախատեսված է դրախտի համար: Մեզ թույլատրվում է սգալ և աղաղակել Աստծուն, ինչպես Բարուքն էր անում, և ինչպես Բարուքի կյանքը, մեր կյանքն էլ ազդեցություն կունենա ուրիշների վրա, որոնց մենք գուցե երբեք չտեսնենք հավիտենության այս կողմում: Բայց ամենակարևորը՝ մենք մրցանակ ենք, որի համար Հիսուսը պայքարել և հաղթել է, այնպես որ թող այդ գիտակցությունը մեզ աջակցի, երբ անցնում ենք կյանքի վշտի և ցավի միջով:

Մեթ Սիլվերման

Տեր Յիսուս Զրիստոսի երկրորդ գալուստը (2)

Այն ամենը, ինչի մասին խոսեցինք, կարող է պարզ ու հասկանալի թվալ, բայց շուտով անհամաձայնություն ենք գտնում որոշակի իրադարձությունների հերթականության վերաբերյալ, մասնավորապես, թե երբ է Եկեղեցին միանալու Տեր Հիսուսին: Ոմանք պնդում են, որ հափշտակությունը տեղի է ունենալու Մեծ նեղության ժամանակաշրջանի վերջում, և որ հավատացյալներն անցնելու են երկրի վրա գալիք դատաստանի միջով, մինչդեռ ուրիշները կարծում են, որ Եկեղեցին լինելու է Զրիստոսի մոտ նախքան Մեծ նեղության ժամանակաշրջանը: Դժվարությունն այն է, որ չկա սուրբգրային որևէ համար, որում միանշանակ գրված լինի, թե Եկեղեցին կանցնի կամ չի անցնի Մեծ նեղության ժամանակաշրջանի միջով: Արդյո՞ք կարող ենք որևէ ուղեցույց գտնել:

Ա Թես. 5:2-ում Պողոսն ասում է, որ Տիրոջ օրը կգա, ինչպես գողը գիշերվա մեջ: Դատաստանը սկսվելու է այն ժամանակ, երբ ոչ ոք չի սպասելու: Բայց հետո 4-րդ համարում Պողոսն ասում է, որ մենք

խավարի մեջ չենք, որպեսզի օրը մեզ վրա հասնի, ինչպես գողը: Ինչպե՞ս բացատրենք այն փաստը, որ անհավատները կրճնվեն, ինչպես գողը գիշերվա մեջ, բայց հավատացյալները՝ ոչ:

Բացատրությունը հետևյալն է. հավատացյալներն այստեղ չեն լինի, երբ սկսվի յոթ տարվա Մեծ նեղության ժամանակաշրջանը: Նրանք կհափշտակվեն օդում՝ Տիրոջ հետ լինելու համար: Մա հանգեցնում է առաջիկա իրադարձությունների հերթականության վերաբերյալ անորոշ ենթադրությունների.

- Հափշտակությունը
- Մեղքի մարդու հայտնվելը (արդյո՞ք հափշտակությունից անմիջապես հետո) և Իսրայելի հետ յոթ տարվա պայմանագրի ստորագրումը
- Մեղքի մարդու կողմից պայմանագրի խախտումը
- Երեքուկես տարվա Մեծ նեղության ժամանակաշրջանը
- Տեր Հիսուսի վերադարձը Ձիթենյաց լեռ

Այս յոթ տարվա ընթացքում մեծ գործունեություն կլինի, և չնայած Աստծո դատաստանի արդյունքն անխուսափելի է, մենք որևէ իրավասություն չունենք՝ կանխատեսելու այն բանի մանրամասները, որը միայն Աստծուն է հայտնի: Մենք ապագա իրադարձությունների ուսումնասիրությանը մոտենում ենք այն գիտակցությամբ, որ *«Աշխարհի սկզբից Աստծուն հայտնի են Իր բոլոր գործերը»* (Գործք 15:18):

Արթուն եղեր

Մենք ունենք հստակ պատվեր՝ սպասել Տիրոջ վերադարձին: Արձագանքն այս պատվերին տարբեր է թե՛ ժամանակից ժամանակ, թե՛ մարդուց մարդ: Կան մարդիկ, ովքեր ապրում են՝ սպասելով, որ Տերը կարող է գալ որևէ պահի, մինչդեռ ուրիշները վարվում են այնպես, կարծես Նա չի գա իրենց կյանքի օրոք:

Մենք չենք ակնկալում, որ անհավատները կվարվեն այնպես, կարծես Տերը շուտով կգա: Իրականում, նրանց վերաբերմունքը վաղուց ի վեր հեգնական է եղել: Նույնիսկ վաղ եկեղեցու օրերին Պետրոսը գրել է. «Բայց նախ պետք է իմանաք, որ վերջին օրերին գալու են ծաղ-

րողներ, որոնք ընթանալու են իրենց ցանկությունների համեմատ, և ասելու են. «Ո՛ր է Նրա գալստյան խոստումը, քանի որ մեր հայրերը ննջեցին, բայց ամեն ինչ շարունակվում է այնպես, ինչպես արարչագործության սկզբից էր» (Բ Պետ. 3:3-4): Եթե այս հարցը տրվել է հարությունից 40 տարի անց, մենք չպետք է զարմանանք, որ այն դեռևս տրվում է այսօր: Նման մեկնաբանությունների հետևում կանգնած վերաբերմունքն այնպիսին է, ինչպիսին Տերը նկարագրում էր Իր աշակերտներին, երբ խոսում էր Նոյի օրերի մասին: Այդ ժամանակ մարդիկ ապրում էին այնպես, կարծես դատաստան երբեք չէր լինելու. «Նրանք ուտում էին և խմում, կին էին առնում և մարդու գնում, մինչև այն օրը, երբ Նոյը տասպան մտավ, ու ջրհեղեղը եկավ և կործանեց բոլորին» (Ղուկ. 17:27):

Պետրոսը շարունակում է ցույց տալ, որ նրանք, ովքեր ծաղրում են Տիրոջ վերադարձի գաղափարը, ոչ մի դաս չեն քաղել Նոյի ժամանակների մարդկանցից. «Որովհետև սրանք դիտմամբ մոռանում են, որ երկինքները ի սկզբանե էին ու երկիրը ջրից և ջրով հաստատվել է Աստծո Խոսքով. որով ջրերի հեղեղումով կորստյան մատնվեց այն ժամանակվա աշխարհը» (Բ Պետ. 3:5-6): Պետրոսն ավելացնում է, որ ինչպես ջրհեղեղը եղավ, այնպես էլ ներկայիս երկինքն ու երկիրը պահվում են կրակի համար, մինչև դատաստանի և ամբարիշտ մարդկանց կործանման օրը: Անհավատի ծաղրը սպասելի է, բայց ծաղրը չի ազդում Աստծո Խոսքի ճշմարտացիության վրա:

Անհավատը կծաղրի Տիրոջ երկրորդ գալստյան միտքը: Հավատացյալը պետք է զգոն լինի դրան: Սա այն բազմաթիվ բաներից մեկն է, որոնց նկատմամբ մենք պետք է զգոն լինենք: Իր երկրային ծառայության ընթացքում մի շարք առիթներով Տերը խոսել է զգոն լինելու կարևորության մասին: Գեթսեմանիի այգում Նա խնդրեց Իր աշակերտներից երեքին զգոն լինել և աղոթել, բայց նրանք չկարողացան անել այն, ինչ Նա պատվիրեց:

Ղուկ. 12:35-40-ում ծառաների մասին առակ է պատմվում է. նրանք սպասում էին հարսանիքից իրենց տիրոջ վերադարձին: Նրանք կօրհնրվեին, եթե արթուն լինեին նրա գալուստի պահին: Այս ուղերձը հաստատվեց նաև Ձիթենյաց լեռան քարոզում: Ինչպես նշում է Մարկոսը, մի մարդ իր ծառաներին աշխատանք հանձնարարեց և զնաց հե-

ռավոր երկիր: Նրանք պետք է սպասեին նրա վերադարձին, որպեսզի ջրնկնեին քնի մեջ: Տերը Ձիթենյաց լեռան իր քարոզն ավարտեց բուրբիս ուղղված խոսքով. «Արթո՛ւն եղեք»:

Ի՞նչ է սա նշանակում հավատացյալներիս համար: Պետրոսը հրատակ ուղերձ ունի մեզ համար. «Ուստի ձեր մտքերը գոտեպնդեցե՛ք, զգա՛ստ եղեք և ձեր հույսն ամբողջապես դրեք այն շնորհի վրա, որ ձեզ է հասնում Հիսուս Քրիստոսի հայտնությամբ, որպես հնազանդ զավակներ, վարվելով ոչ թե ըստ ձեր նախկին՝ տգիտության ժամանակների կրքերի, այլ ինչպես ձեզ Կանչողը սուրբ է, դուք էլ ձեր ամբողջ վարքով սո՛ւրբ եղեք: Քանի որ գրված է. «Սո՛ւրբ եղեք, որովհետև Ես սուրբ եմ»» (Ա Պետ. 1:13-16): Սուրբ լինել նախ նշանակում է առանձնացված լինել Աստծո համար: Մենք Նրանն ենք՝ Նրա կողմից առաջնորդվելու և ուղղորդվելու, ինչպես Ինքն է հարմար գտնում:

Պողոսը նման ուղերձ է տալիս. «Իսկ դուք, եղբայրներ, խավարի մեջ չեք, որ այն օրը գողի պես ձեր վրա հասնի: Դուք բոլորդ էլ լույսի որդիներ եք և ցերեկվա որդիներ. մենք գիշերինը չենք և ո՛չ էլ խավարինը: Ուրեմն, ջքենք ուրիշների պես, այլ արթուն և զգաստ լինենք: Որովհետև ովքեր քնում են, գիշերն են քնում, և ովքեր հարքում են, գիշերն են հարքում: Իսկ մենք, որ ցերեկին ենք պատկանում, արթո՛ւն լինենք՝ հավատի ու սիրո գրասիր հագած, փրկության հույսի սաղավարտը դրած որովհետև Աստված մեզ չի սահմանել բարկության համար, այլ՝ փրկություն ստանալու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով, որը մեռավ մեզ համար, որպեսզի մենք՝ արթուն, թե՛ ննջած, Նրա հետ միասին ապրենք» (Ա Թեա. 5:4-10): Մենք չպետք է նմանվենք մեր շուրջը գտնվողներին, այլ ակտիվորեն ծառայենք մեր Տիրոջը՝ սպասելով Նրա գալուստին, որպեսզի թե՛ ապրենք, և թե՛ մեռնենք, Նրա հետ հաղորդության մեջ լինենք:

Հովհաննեսն Ասիայի յոթ եկեղեցիներին ուղղված իր նամակներում ամրապնդում է այս ուղերձը. «Արթո՛ւն եղիր և հաստատիր այն մնացած բաները, որ մեռնելու վրա են, քանի որ քո գործերը Աստծո առաջ կատարյալ չեմ գտնում: Ուստի հիշի՛ր, թե ինչպես ընդունեցիր ու լսեցիր և ամուր պահի՛ր, և սպաշխարհի՛ր: Եթե արթուն չմնաս, գողի պես գալու եմ քո վրա, և քնավ չես իմանալու, թե որ ժամին եմ գալու քո վրա» (Հայտ. 3:2-3): Հայտ. 16:15-ը նույնպես կարդում ենք. «Ահա, գալիս եմ

գողի պես: Երանի նրան, որ արթուն կմնա ու կսպասի իր հանդերձները, որպեսզի մերկ չընջի, ու նրա ամոթը տեսնեն»:

Ինչպե՞ս պետք է վարվենք Երկրորդ գալստյան լույսի ներքո: Մենք պետք է ապրենք աստվածավախ կյանք և Տիրոջ ծառայության մեջ ակտիվ լինենք: Սակայն անհրաժեշտ է նաև զգոն մնալ: Սարդիկեի եկեղեցուն ուղղված ուղերձն այն էր, որ նրանք պետք է արթուն լինեին ու հաստատեին մնացած բաները: Դա նշանակում էր, որ նրանք զգուշորեն պետք է պահպանեին ճշմարտությունը ու ջանասիրաբար գործեին Տիրոջը ծառայելու մեջ՝ միաժամանակ սպասելով Նրա գալուստյանը: Այդ ուղերձը մեզ համար նույնպես խիստ այժմեական է:

Եկե՛ք արթուն լինենք և ծառայենք, մինչ սպասում ենք Տիրոջը երկրնքից:

Դոն Սթոքմըր

Նշում: Անցյալ թողարկման՝ Երկրորդ գալստյան մասին հոդվածի մի մասը ենթակա է ուղղման: Համաշխարհային ղեկավարը ստորագրելու է յոթ տարվա պայմանագիր հրեա ազգի հետ և այն խախտելու է ժամանակաշրջանի կեսին, ոչ թե սկզբում: Այդ ժամանակ է տեղի ունենալու ավերմունքի պղծությունը:

Մեղավոր

Չոռմ. 8-րդ գլուխ

Ռու երբևէ հիասթափեցրե՞լ ես ինչ-որ մեկին, ով հույսը քեզ վրա էր դրել: Մեղքը «դաջված է» քո դեմքին, կորցրել ես ուրախությունը և չես կարողանում առանց մեղավորության կամ ամոթի զգացման նույնիսկ աղոթել կամ Աստվածաշունչ կարդալ:

Մեղավոր: Դու մեղավոր ես, եթե նույնիսկ մարդիկ դա քո դեմքին չեն ասում. դու գիտես, զգում ես, որ ուրիշներին են այդ մասին ասում կամ դատում են քեզ իրենց սրտերում, ու չես կարող որևէ բան անել այդ ամենի դեմ:

Մեղավոր: Հենց սա է կյանքում ձախողումներ կրած բազում անհատների ջրարձրաձայնված վճիռը: Ինչպես Պետրոս առաքյալը հայտնաբերեց, Աստծո ներումը մոտ է այնքան, որքան աղոթքը:

«Եվ Պետրոսը հիշեց Հիսուսի այն խոսքը, որ ասաց. «Հավի՞ր խոսելուց առաջ՝ երեք անգամ կուրանաս ինձ», և դուրս գնաց ու դառնապես լացեց» (Մատթ. 26:75):

Երբևէ պատահե՞լ է, որ դու Պետրոսի նման քեզ մեղավոր, հուսահատ ու ամոթահար զգաս ու չիմանաս, թե ինչ կարելի է անել: Ամոթով ու խղճի խայթով երբևէ գլուխդ խոնարհել և շնջացե՞լ ես. «Աստված իմ, ողորմի՛ր ինձ»:

Սիրելի՛ ընթերցող, ինձ ծանոթ են այդ զգացումները, ես ունեցել եմ: Հիշեցնեմ, որ երբ այլևս չես կարողանում մեղավոր աչքերով Աստծուն նայել, համոզված եղիր, որ Աստված շարունակում է քեզ նայել ոչ թե գայրացած ծնողի բարկությամբ, այլ կարեկցանքով ու սրտացավությամբ, սիրով ու քնքշությամբ: Եվ երբ Նրանից անգամ ներում չես ակրնկալում, Նա Իր շնորհն ու սերը քեզ է տալիս և հիշեցնում, որ դու Իրենն ես: Նա հոգ է տանում քեզ համար, սրբում է ամոթահարության արցունքներդ և խրախուսում է նորից փորձել: Եթե աչքերդ այսօր լի են մեղավորության ու ձախողվածության արցունքներով, վազի՛ր Երկնավոր Հորդ ընդամազ, նետվի՛ր Նրա գիրկը, Նա քո ողբը կվերածի ուրախության արցունքների:

Պարգապես հիշի՛ր.

«Եթե Որդին ազատի ձեզ, ուրեմն հիրավի ազատ կլինեք» (Հովհ. 8:36):

«Ուստի հիմա դատասարտություն չկա Հիսուս Քրիստոսի մեջ լինողների համար, որ մարմնավորապես չեն վարվում, այլ հոգևորապես» (Հռոմ. 8:1):

Վեր. Հովսեփ Հովսեփյան



Մտորումներ Հայաստան կատարած իմ այցի մասին.

միսիոներական մոռացված դաշտը

Վերջերս պատիվ ունեցա Հայ քրիստոնեական առաքելության (ACM) հետ Հայաստան այցելելու և Երևանում երկօրյա սեմինար վարելու: Մոտավորապես 80 հովիվ էր հավաքվել՝ սովորելու և այսօրվա աշխարհում ավետարանչության մասին իրենց մտքերով կիսվելու համար: Քաջալերական էր հանդիպել Հայաստանում ծառայող հովիվների, ուսանողական ծառայության մեջ ներգրավված համալսարանական ուսանողների և Վրաստանից ու հարևան երկրներից եկած առաջնորդների: Ես նաև ուրախություն ունեցա աղոթելու երեք անհատների համար, ովքեր Աստծո առաջնորդությունը զգացին հոգևոր ծառայություն սկսելու համար:

Հայաստանը քրիստոնեական հարուստ ժառանգություն ունեցող երկիր է, սակայն այն մեծ մասամբ մնում է անհասանելի և մոռացված բազմաթիվ միսիոներական խմբերի ու եկեղեցիների կողմից: Չնայած պատմականորեն քրիստոնեական երկիր լինելուն՝ բնակչության միայն մոտ 0.5%-ն է իրեն նույնականացնում որպես ավետարանական քրիստոնյաներ (մոտավորապես 15,836 մարդ): Հայաստանի բնակչությունը կազմում է մոտավորապես 2.9 միլիոն մարդ: Սա ծառայության և ավետարանչության նշանակալի հնարավորություն է ներկայացնում:

ACM-ի ազդեցությունը

ACM-ը հավատարմորեն ծառայում է Հայաստանում 1998 թ.-ից՝ տրամադրելով մարդասիրական օգնություն, հոգևոր աջակցություն և աշակերտություն: Նրանց աշխատանքը վկայում է Ավետարանի գործության և ամբողջ աշխարհի հավատացյալների հետ գործընկերության մասին Մեծ հանձնարարականը կատարելու գործում: Ինձ ամենաշատը զարմացրեց ACM-ի ծառայակիցների և կամավորների անսասան նվիրվածությունը, ովքեր ծառայում են նվիրումով և կարեկցանքով՝ հույս և լույս բերելով կարիքավոր ժողովրդին:

Ապագայի տեսլականը

Երբ խորհում եմ Հայաստանի ներուժի մասին, համոզվում եմ, որ Աստծո առաջնորդությամբ և գործությամբ այս ազգը կարող է դառնալ տարածաշրջանում առաքելությունների Անտիոքը (Գործք 13:2-3): Մտքումս պատկերացնում եմ հայ հավատացյալներին, որոնք մտնում են երկրի տարբեր թաղամասեր և քաղաքներ, առօրյա գրույցների միջոցով կիսվում Ավետարանով, փոքր եկեղեցիներ հիմնում և հավատք սնուցում այնտեղ, որտեղ այն նոր է արմատներ գցել:

Իմ առաքելությունը՝ Ասիայի ավետարանչական ընկերակցության միջազգային կազմակերպությունը (AEFI), սկսել է քննարկումներ ACM-ի հետ գործընկերության հնարավորությունների շուրջ՝ քրիստոնյա աշխատողների համար Աստվածաշնչի համակարգված ուսուցում ապահովելու համար: Մենք հավատում ենք, որ այս գործընկերությունը կզինի և կամրապնդի տեղի հավատացյալներին՝ արդյունավետորեն ծառայելու իրենց համայնքներին և Ավետարանը տարածելու: Աղոթե՛ք այս հարցում Տիրոջ առաջնորդության համար:

Շատ շնորհակալ եմ Հայաստան այցելելու առանձնաշնորհման և հովիվ Հրաչ Գույունյանի, դոկտ. Դանիել Ջեյմսի և ACM-ի ամբողջ անձնակազմի հետ ծառայելու հնարավորության համար:

Հայաստանը կարող է շատերի համար միսիոներական մոռացված դաշտ լինել, բայց այն Աստծո կողմից մոռացված չէ: Հունձքն առատ է, իսկ մշակները՝ քիչ, բայց նրանք ավելանում են: Հիմա ժամանակն է, որ համաշխարհային Եկեղեցին կանգնի Հայաստանի կողքին, ներդրում կատարի նրա ժողովրդի մեջ: Թե՛ աղոթքով, թե՛ ֆինանսական աջակցությամբ, թե՛ անձնական ներգրավվածության միջոցով Հայաստանում մեզանից յուրաքանչյուրն ունի իր դերն Աստծո գործում:

«Իսկ ինչպե՞ս կանչեն Նրան, ում չեն հավատում և ինչպե՞ս հավատան Նրան, ում մասին չեն լսել, և ինչպե՞ս պիտի լսեն առանց քարոզչի» (Հռոմ. 10:14):

Դոկտ.՝ Ջոնաթան Ջեյմս,
AEFI-ի գործադիր նախագահ